ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԲԱՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՁՆԾԱՂԻԿ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ, ՊԱՀԱԿԱԿԵՏԻ ԵՎ ԼՎԱՑՔԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/20

ք. Մասիս « 10 » հունվարի 2024թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԱԼ-ԿԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ֆ Գյուլամիրյան, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արարատի մարզի Մասիսի համայնքի Նորաբաց բնակավայրի <<Ձնծաղիկ>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ շենքին հարակից շինությունում սանհանգույցի, պահակակետի և լվացքատան կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական

աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **5 946 000 (հինգ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար)** ՀՀ դրամը, որից 991 000 (ինը հարյուր իննսունմեկ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա հունվարի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

h/h	Խախտումը	Պատասխանատվությունը՝ տուգանքի նշանակում պայմանագրի գնի
1	Շինարարական հրապարակի ոչ պատշաճ՝	
1⍰1	կազմակերպում	0,2%
1⍰2	կահավորում	0,2%
2	Անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանում	1.0%
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանում	0,2%

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մասիս համայնք	<<ՎԱԼ-ԿԱՐ>> ՍՊԸ
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	Արարատի մարզ գ. Քաղցրաշեն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 220013333608000
Հ/Հ 900 432 000 348	<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 04240324	Արարատ մ/Ճ
	ՀՎՀՀ 04221191
----------	Ֆ. Գյուլամիրյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված թիվ 1
« 10 » հունվարի 2023թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/20 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մասիսի համայնքի Նորաբաց բնակավայրի <<Ձնծաղիկ>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ շենքին հարակից շինությունում սանհանգույցի, պահակակետի և լվացքատան կառուցման աշխատանքներ

h/h	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Գինը	Գումարը	Կշիռը ընդհանուր արժեքից %
1	2	3	4	5	6	7
	Ներքին հարդարում					
	Քանդման աշխատանքներ					
1	Պատերի կերամիկական սալերի քանդում	մ2	10,35	0,73	7,57	
2	Ց/ավազե սվաղի քանդում պատերից	100 մ^2	0,1035	22,58	2,34	
3	Պատերի մաքրում հին ներկից	100մ^2	0,67167	35,70	23,98	
4	Ց/ա հարթեցուցիչ շերտի քանդում	100մ^2	0,574	45,04	25,85	
5	Խճանկարային և բետոնե հատակների քանդում (միջինը 6 սմ)	մ^3	2,87	19,74	56,65	
6	Միջնորմների քանդում	մ3	0,9	9,73	8,76	
7	Գաջի սվաղի քանդում պատերից	100 մ^2	0,219251	95,08	20,85	
8	Պատերի մաքրում հին ներկից	100մ^2	0,67167	12,61	8,47	
9	Խեցեսալե հատակների քանդում	100 մ^2	0,015	53,11	0,80	
10	Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով	տն	11,4471	0,44	5,02	
11	Տեղափոխում 5կմ	տն	11,4471	1,76	20,19	3,64
	Պատեր, միջնորմներ			0,00	**180,47**	
1	Միջնորմի իրականացում 15 սմ պեմզաբլոկով	մ3	5,589	28,70	160,38	
2	Միջնորմների և պատերի ամրանավորում	տն	0,06	72,65	4,36	
3	Անցքերի շաղափում պատերի մեջ (Φ12AIII ամրանածողերի համար)	100հտ	0,3	31,84	9,55	
4	Ամրան Φ6AI	տն	0,02	435,96	8,72	
5	Ամրան Φ12A500c	տն	0,04	430,65	17,23	
6	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 բետոնից	մ^3	0,195	83,74	16,33	4,37
	Հատակներ			0,00	**216,56**	
1	Բնահողի տոփանում խճով 4սմ / 20-40 /	100մ^2	0,574	33,02	18,95	
2	Հատակի միաշերտ հիդրոմեկուսացում տոլով բիտումի մածիկի վրա	100 մ^2	0,32	227,42	72,78	
3	Հատակի բետոնե շերտի կառուցում 50մմ հաստ.B12,5 թեթև բետոնով	100 մ^2	0,574	211,28	121,28	
4	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	մ^2	57,4	1,59	91,09	
5	Հատակների կառուցում պրեսգրանիտից 40*40, չսահող	մ^2	57,4	9,37	537,58	
6	Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ	100գմ	0,4504	124,60	56,12	18,12
	Հարդարման աշխատանքներ			0,00	**897,80**	
1	Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2	մ^2	25,983	2,83	73,42	
2	Պատերի սվաղում գաջի շաղախով	100 մ^2	0,6867	288,51	198,12	
3	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով / թույլ հատվածներում ցանցի կիրառմամբ /	100մ^2	0,3321	212,91	70,71	
4	Պատերի երեսապատում հախճասալերով 200*300մմ H=1,5 : 2,7մ	100մ^2	0,3084	653,68	201,60	
5	Պատերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով	100 մ^2	1,7322	178,10	308,51	
6	Պլաստմասե կախովի առաստաղի պատրաստում պրոֆիլներով կարկասի վրա / ս պի տակ /	մ2	57,4	7,14	409,98	
7	Կախովի առաստաղի պատրաստման համար պրոֆիլի արժեքը / պր ո ֆ ի լ F47, 0,4մ մ /	գմ	218,12	0,28	61,56	26,72

	Այլ աշխատանքներ			0,00	1323,90	
	Սանհանգույցի պարագաների կոմպլեկտ	կ-տ	1	9,92	9,92	
2	Հայելու կոմպլեկտի տեղադրում լվացարանային հատվածների համար / ներառյալ ամրացման դետալները /	կ-տ	1	19,71	19,71	0,60
	էլեկտրատեխնիկական մաս			0,00	29,63	
	էլեկտրական լուսավորություն			0,00		
1	Լուսավորության մուտքային վահանակի տեղադրում, 40Ա-380Վ եռաֆազ, խմբային 220Վ 1x16Ա, 1x25Ա , աավտոմատ անջատիչներով և դիֆ. ավտոմատ 25ա, 35մԱ, 32Ա, 30մԱ անջատիչներով	լրակազմ	1,0	13,31	13,31	
2	Սարքավորումների մոնտաժման վահանակ 18 մոդուլի համար IP 65	հատ	1	22,97	22,97	
3	40Ա եռաֆազ ավտոմատ անջատիչ TX3 60004P, C40A	հատ	1	13,09	13,09	
4	50Ա եռաֆազ ավտոմատ անջատիչ TX3 60004P, C50A	հատ	1	13,09	13,09	
5	16Ա միաֆազ ավտոմատ անջատիչ, TX3 6000 1P B16A	հատ	1	1,90	1,90	
6	25Ա միաֆազ ավտոմատ անջատիչ , TX3 6000 1P B25A	հատ	1	1,90	1,90	
7	Դիֆերենցիալ ավտոմատ անջատիչ , 220Վ, 32Ա, 30մԱ	հատ	3	15,31	45,94	
8	Դիֆերենցիալ ավտոմատ անջատիչ , 220Վ, 25Ա, 30մԱ	հատ	1	15,31	15,31	
9	Առաստաղային լուսատու լուսադիոդային, 24Վտ, կլոր, լուսային հոսքը 2400Լմ, լուսային արդյունավետությունը 100Լմ/Վտ, լույսի ջերմաստիճանը 4000Կ, լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	9	6,12	55,12	
10	Առաստաղային լուսատու լուսադիոդային, 12Վտ, կլոր, լուսային հոսքը 1200Լմ, լուսային արդյունավետությունը 100Լմ/Վտ, լույսի ջերմաստիճանը 4000Կ, լուսահաղորդման ինդեքսը 80	հատ	12	5,36	64,30	
11	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x1,5 մմ2 ВВГнг-LS	100մ	1,90	62,60	118,94	
12	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x2,5 մմ2 ВВГнг-LS	100մ	0,85	81,34	69,14	
13	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x4 մմ2 ВВГнг-LS	100մ	0,45	108,41	48,79	
14	Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 5x6 մմ2 ВВГнг-LS	100մ	0,30	218,91	65,67	
15	Անջատիչ նորմալ տարբերակի, միաստեղ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	3,0	1,55	4,66	
16	Անջատիչ նորմալ տարբերակի, երկտակած, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա	հատ	1,0	2,32	2,32	
17	Անջատիչ նորմալ տարբերակի, միաստեղ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա / անցումային /	հատ	1,0	1,55	1,55	
18	Երկբևեռ խրոցակային վարդակ, հողանցման հպակով 220Վ16Ա,IP54	հատ	15,0	1,79	26,90	
19	Երկբևեռ խրոցակային վարդակ, հողանցման հպակով 220Վ16Ա,IP65	հատ	1,0	1,79	1,79	
20	Պոլիվինիլքլորիդե« այրմանը չնպաստող էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակների տեղադրում Φ50մմ	100մ	0,3	85,55	25,67	
21	Ճյուղավորիչ տուփ ներսի փակ տեղադրման համար	100հտ	0,10	122,62	12,26	
22	Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար	100հտ	0,22	8,55	1,88	
23	Ճարմանդ ներսի հաղորդալարերի ամրակապման համար	100հտ	8,80	1,28	11,23	
24	Ակոսների փորում 20*40	100մ	1,00	39,59	39,59	
25	Ակոսագծերի գաջի սվաղում	100մ^2	0,04	251,67	10,07	
26	Անցքերի շաղափում քարե պատի մեջ մինչև 37սմ	100 հատ	0,07	48,41	3,39	13,94
	Բացվածքներ			0,00	690,78	
	Քանդման աշխատանքներ			0,00		
1	Գոյություն ունեցող փայտե դռների քանդում	100 մ^2	0,0210	145,99	3,07	
2	Գոյություն ունեցող փայտե պատուհանների և պատուհանագոգերի քանդում	100 մ^2	0,0630	248,39	15,65	
3	Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում	100 մ^2	0,04	95,08	4,24	
4	Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով	տն	0,24	0,44	0,11	
5	Տեղափոխում 5կմ	տն	0,24	1,76	0,42	0,47
	Բացվածքներ			0,00	23,49	
1	Մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ ,դռների տեղադրում / հայկական պրոֆիլ /	մ^2	11,13	42,27	470,51	

	Պատուհանագոգերի հարթեցում g/ ավազե շաղախով 5սմ	100 մ^2	0,004	231,58	1,00	
3	Մետաղապլաստե բլոկով պատուհանների տեղադրում 60 մմ հաստ, ապակեփաթեթով 4+4 մմ /բացվող, սպիտակ, հայկական պրոֆիլ/	մ^2	2,10	30,76	64,59	
4	Մետաղապլաստե բլոկով պատուհանների տեղադրում 60 մմ հաստ, ապակեփաթեթով 4+4 մմ /չբացվող, սպիտակ, հայկական պրոֆիլ/	մ^2	8,40	20,82	174,90	
5	Պլաստմասե պատուհանագոգի տեղադրում, սպիտակ /35սմ լայնութ./	գմ	3,84	3,28	12,61	
6	Պատուհանագոգի խցան	զույգ	2,00	0,38	0,77	
7	Քարե պատերում, մինչև 2մ բարձրությամբ բացվացքներում պլաստմասե 35սմ լայն. պատուհանագոգի տեղադրում	100մ^2 բացվ.	0,105	105,24	11,05	
8	Պատուհանագոգի արցունքաթափերի տեղադրում ցինկապատ թիթեղից 0,6 մմ	100մ^2	0,005	485,16	2,18	14,89
	Հարդարման աշխատանքներ			0,00	**737,61**	
1	Պատուհանների և դռների թեքությունների սվաղ գաջի շաղախով	100 մ^2	0,04	594,93	26,53	
2	Թեքությունների և պատերի ներկում լատեքսային ներկով	100 մ^2	0,045	178,10	7,94	
3	Սվաղի անկյունակ	գմ	71,60	0,09	6,40	0,82
	Ջեռուցում և օդափոխություն			0,00	**40,87**	
	Ջեռուցման ներքին ցանց			0,00		
1	Ալյումինե շերտով պոլիպրոպիլենե, տաք ջրի համար խողովակների մոնտաժում , PN=20 d=25մմ / փորձարկումով BITHERM /	գմ	20,00	3,20	63,98	
2	Ալյումինե շերտով պոլիպրոպիլենե, տաք ջրի համար խողովակների մոնտաժում , PN=10 d=20մմ / փորձարկումով BITHERM /	գմ	5,00	3,54	17,70	
3	Մարտկոցի վերևի փական Φ15	հատ	2,00	4,95	9,90	
4	Մարտկոցի ներքևի փական Φ15	հատ	2,00	4,88	9,76	
5	Գնդային փականի տեղադրում d=20մմ	հատ	2,0	4,67	9,33	
6	Ալյումինե նոր մարտկոցների տեղադրում H = 500մմ, 0,12Կվտ	ԷԿՄ	7,80	0,82	6,41	
7	Ալյումինե նոր մարտկոցների արժեք H = 500մմ, 0,12Կվտ , 36 հատ	հատ	26,00	5,25	136,39	
8	Անցքերի բացում պատերում և փակում 0.15x0.15	100 տեղ	0,02	318,25	6,37	
9	Համակարգի հիդրավլիկ փորձարկում	100մ	0,25	9,31	2,33	
10	Պողպ. պաշտպ. ժատյան d =40մմ / 2հատ /	մ	2,00	2,76	5,53	
11	Խողովակի ամրակապում	հատ	25,00	0,06	1,59	
12	Մարտկոցի մոնտաժային կոմպլեկտ	հատ	2,00	1,53	3,06	
13	Խողովակի պոլիպրոպիլենե ձևավոր մասեր Φ20-Φ25	հատ	16,00	0,11	1,80	
14	Օդատար 0,5մմ ցինկապատ թիթեղից 150մմ 8գմ	մ2	3,77	5,00	18,85	
15	Օդափոխության ճաղաշար 150x150մմ	հատ	2,00	4,14	8,28	
16	Օդատարների վրա տեղադրվող ցինկապատ 0,5 թիթեղից գլխանոց	100մ^2	0,005	426,01	2,13	6,12
	Ջրագծի ներքին տեղամաս			0,00	**303,39**	
1	Պոլիպրոպիլենե խողովակ .d=25մմ փորձարկումով և ձևավոր մասերի մոնտաժով	մ	15,0	3,00	45,04	
2	Պոլիպրոպիլենե խողովակ .d=20մմ փորձարկումով և ձևավոր մասերի մոնտաժով	մ	35,0	3,34	116,79	
3	Պոլիպրոպիլենե խողովակի ձևավոր մասեր	հատ	30,0	0,16	4,78	
4	Փականների տեղադրում d=15 մմ	հատ	9,0	1,81	16,27	
5	Փականների տեղադրում d=20 մմ	հատ	1,0	2,06	2,06	
6	Ճկուն խողովակի տեղադրում զուգարանակոնքի լվացման տակառիկի համար DN15, L=0,5մ	հատ	1,0	3,19	3,19	
7	Ոչ ստացիոնար տեղակայված խառնարանով ցնցուղի տեղադրում	հատ	1,0	33,18	33,18	
8	Խողովակների լվացում վարակազերծումով	1000մ	0,050	72,65	3,63	
9	Լվացարանի խառնարանով ծորակի տեղ.	հատ	2,0	11,76	23,51	5,01
	Կոյուղագծի ներքին տեղամաս			0,00	**248,46**	
1	Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=110մմ ներառյալ ձևավոր մասերի տեղադրումը և փորձարկումը	մ	16,00	2,13	34,15	
2	Պոլիվինիլքլորիդե խողովակի տեղադրում d=50մմ ներառյալ ձևավոր մասերի տեղադրումը և փորձարկումը	մ	15,00	1,35	20,27	
3	Խեցե լվացարանի տեղադրում, սիֆոնով, թողարկով և ճկուն խողովակով	կ-տ	1,00	23,69	23,69	
4	Զուգարանակոնքի տեղադրում ճկուն խողովակով	կ-տ	1,00	52,21	52,21	

	Ուղղանկյուն մետաղական ներկառուցվող լվացարանի տեղադրում, ներառյալ պահարանը	կ-տ	1,00	52,00	52,00	
6	Ցնցուղարանի տակդիրի տեղադրում	կ-տ	1,0	37,10	37,10	
7	Հոսակի տեղադրում d=50մմ	հտ	2,00	5,21	10,42	
8	Պոլիվինիլքլորիդե ձևավոր մասերի արժեք d=50մմ	հտ	12,00	1,13	13,53	
9	Պոլիվինիլքլորիդե ձևավոր մասերի արժեք d=110մմ	հտ	12,00	1,44	17,26	
10	Ստուգիչի արժեք d=100մմ	հտ	1,00	1,40	1,40	5,29
					262,03	
	Ընդամենը				4955,000	100,00
	ԱԱՀ 20%				991,000	
	Ընդամենը				5946,000	

* Կապալառուն աշխատանքները կատարում է **Նորաբաց** բնակավայրում:

Աշխատանքների կատարման փուլում Կապալառուն պետք է ներկայացնի լիցենզիա՝ հետևյալ ներդիրներով.
- բնակելի, հասարակական և արտադրական,
- հիդրոտեխնիկական

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիս համայնք
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 000 348
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Հ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՎԱԼ-ԿԱՐ>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Քաղցրաշեն
Հ/Հ 220013333608000
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Արարատ մ/Ճ
ՀՎՀՀ 04221191

Ֆ. Գյուլամիրյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 2
« 10 » հունվարի 2023թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/20 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մասիսի համայնքի Նորաբաց բնակավայրի <<Ձնծաղիկ>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ շենքին հարակից շինությունում սանհանգույցի, պահակակետի և լվացքատան կառուցման աշխատանքներ

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Մասիսի համայնքի Նորաբաց բնակավայրի <<Ձնծաղիկ>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ շենքին հարակից շինությունում սանհանգույցի, պահակակետի և լվացքատան կառուցման աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիս համայնք
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 000 348
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՎԱԼ-ԿԱՐ>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Քաղցրաշեն
Հ/Հ 220013333608000
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Արարատ մ/ճ
ՀՎՀՀ 04221191

Ֆ. Գյուլամիրյան
(ստորագրություն)

Հավելված N 3
« 10 » հունվարի 2023թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 202 -ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	Մասիսի համայնքի Նորաբաց բնակավայրի <<Ձնծաղիկ>> մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ շենքին հարակից շինությունում սանհանգույցի, պահակակետի և լվացքատան կառուցման>> աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	.. . %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիս համայնք
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432000 348
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
L.S.

ԿԱՏԱՐՈՂ

<<ՎԱԼ-ԿԱՐ>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Քաղցրաշեն
Հ/Հ 220013333608000
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ Բանկ>> ՓԲԸ
Արարատ մ/ճ
ՀՎՀՀ 04221191

Ֆ. Գյուլամիրյան _____
(ստորագրություն)

Հավելված թիվ 4
« 10 » հունվարի 2023թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.S.	Կ.S.

Հավելված 4.1
« 10 » հունվարի 2023թ. կնքված
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-23/20 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն